

Արմեն Յ. Մարուքյան
Պատմ. գիտ. դոկտոր

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԸ ԼՈՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ

1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագրի
100-ամյակի առթիվ*

Բանալի բառեր – Հայկական հարց, Լոզանի խորհրդաժողով, հայկական «ազգային օջախ», ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքներ, Սևրի պայմանագիր, Լոզանի պայմանագիր, Հայաստան, Թուրքիա:

Մուտք

Թուրքիան մշտապես շահարկել և այսօր էլ շահարկում է Սևրի պայմանագրի օրինականության հարցը՝ հիմնվելով ոչ միայն այդ փաստաթղթի վավերացված և օրինական ուժ ստացած չլինելու հանգամանքի, այլև դրա՝ իբրև Լոզանի պայմանագրով¹ փոխարինվելու մասին «հիմնավորման» վրա: Լոզանի խորհրդաժողովից և դրա ընթացքում ստորագրված պայմանագրից խոր հիասթափության հետևանքով այս մոտեցումը տևական ժամանակ տիրապետող է եղել նաև հայ քաղաքական շրջանակներում²:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 06.05.2023:

1 Տես **Ataov T.**, Turkish Foreign Policy 1923-1938, Ankara, Ankara Universitesi Siyasal Bilgiler Fakultesi Yayinlari, 1961, **Karacan A.**, Lozan, Istanbul, “Milliyet Yayinlari”, 1971, **Hacaloglu G.**, Lozan, Ankara, 1973, **Sonyel S.**, The Foreign Policy of the Turkish Nationalists 1919-1923, London, 1971, **Մուլնի** Turkish Diplomacy 1918-1923. Mustafa Kemal and the Turkish National Movement, London, Sage Publications, 1975:

2 Լոզանի խորհրդաժողովի արդյունքներից խորապես հիասթափված Ա. Ահարոնյանը պայմանագրի ստորագրումից հետո՝ 1923 թ. օգոստոսի 8-ին, հուզական բողոքի նոտա է հղում դաշնակից տերություններին, որում վերջիններիս քննադատում է «Սևրի պայմանագրի փոխարեն Լոզանի պայ-

Խորհրդային պատմագրությունը, Սևրի և Լոզանի պայմանագրերը բացառապես դիտարկելով մեծ տերությունների շահերի բախման համատեքստում, նույնպես հակված էր այն տեսակետին, որ Սևրի պայմանագիրը փոխարինվել է Լոզանի պայմանագրով³: Հակառակ դրան՝ Սփյուռքում⁴, ինչպես նաև հետխորհրդային շրջանում Հայաստանում⁵ հրատարակված աշխատություններում հիմնավորվում է այն տեսակետը, որ Սևրը և Լոզանը միանգամայն տարբեր պայմանագրեր են, ուստի առաջինը երկրորդով չէր կարող փոխարինվել:

1. Հայկական «ազգային օջախի» ստեղծման շուրջ քննարկումները Լոզանի խորհրդաժողովի նիստերում

Ինչպես հայտնի է, Լոզանի խորհրդաժողովը հրավիրվել էր գլխավորապես հույն-թուրքական պատերազմի արդյունքներն ամփոփելու, սևծովյան նեղուցների կարգավիճակի և օսմանյան նախկին պարտքի հարցերը քննարկելու օրակարգով, սակայն դրա ընթացքում Հայկական հարցը նույնպես դարձավ քննարկման առարկա: Հայկական հարցի շուրջ քննարկումներ ծավալվեցին խորհրդաժողովի ռազմատարածքային հանձնաժողովի 1922 թ. դեկտեմբերի 12-14-ի, 1923 թ. հունվարի 9-ի, հունիսի 4-ի, հուլիսի 13-ի և փոքրամասնու-

մանագիրը կնքելու» համար և հայտարարում, որ որպես Սևրի պայմանագիրը ստորագրող կողմ Հայաստանի պատվիրակությունն իրեն իրավունք է վերապահում չընդունելու Լոզանի պայմանագրի այն դրույթները, որոնք վերաբերում են Սևրի պայմանագրով Հայաստանին շնորհված իրավունքների պաշտպանությանը (տես **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բ տպագր., Պէյրուք, Համազգային, 1968, էջ 409-410):

3 Տե՛ս «Армянский вопрос на Лозаннской конференции. Извлечения из протоколов», Тифлис, «Заккнига», 1926, «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917)», խմբ. **Ջ. Կիրակոսյան**, Եր., «Հայաստան» հրատ., 1972:

4 Տե՛ս **Թորիկեան Շ.**, Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրուք, Համազգայինի Վահէ Սէթեան տպարան, 1976, **Барсегов Ю.**, Арбитражное решение президента США по армяно-турецкой границе (политический и международно-правовой комментарий), Ер., Центр русско-армянских инициатив, 1995, **Նույնի** Турецкая доктрина международного права на службе политики геноцида (о концепции члена “комиссии примирения” Гюндюз Актана), М., «Готика», 2002, «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. документы и комментарий», Составитель, отв. редактор, автор предисловия и комментария д.и.н., профессор **Ю. Г. Барсегов**, т. 1, М., изд. «Гардарика», 2002, т. 2, ч. 1, М., 2003, т. 2, ч. 2, М., 2005, **Տերտերեան Գ.**, Մեր հողային պահանջատիրուիւնը միջազգային հանրային իրավունքին մէջ (Տարագիր Արեւմտահայութեան Համափիւռքեան Քոնկրէսին ՏԱՀԲ-ի Հրամայականը), Բ. տպագրութիւն, Պէյրուք, «Զինկոգրաֆ Կեդեմեան», 2016:

5 Տե՛ս **Պասյան Ա.**, Հայրենատիրութիւն. Հայոց պահանջատիրութեան իրավական հիմունքները և հարակից հարցեր (հողվածների ժողովածու), Եր., «Ասողիկ» հրատ., 2012, **Սարուքյան Ա.**, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., 2014, **Նույնի** Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Եր., «Տիր» հրատ., 2014:

թյունների գործերով ենթահանձնաժողովի 1923 թ. հունվարի 6-ի նիստերի ընթացքում:

Ռազմատարածքային հանձնաժողովի 1922 թ. դեկտեմբերի 12-ի նիստում բրիտանական պատվիրակության նախագահ լորդ Քերզոնը փորձեց Լոզանի խորհրդաժողովի օրակարգ բերել Լոնդոնի խորհրդաժողովում թուրքերի կողմից մերժված հայկական «ազգային օջախ» ստեղծման գաղափարը⁶: Առհասարակ հայկական «ազգային օջախ» հարցը պետք է դիտարկել ոչ միայն իրավական, այլև քաղաքական հարթություններում, որոնք ինչ-որ առումով հակադրվում են իրար: Մի կողմից՝ «ազգային օջախ» ստեղծումով իրավական առումով չեղարկվում էր ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռով և Սևրի պայմանագրի համապատասխան հողվածներով երաշխավորված «Ազատ և Միացյալ Հայաստանի» գաղափարը: Այս պարագայում հայ ժողովուրդը Արևմտյան Հայաստանի որոշ նահանգների նկատմամբ իր իրավունքի վերականգնման փոխարեն պետք է բավարարվեր իր հայրենիքի կամ Կիլիկիայի ինչ-որ սահմանափակ տարածքում գաղութի կարգավիճակով՝ անորոշ ինքնավարությամբ: Մյուս կողմից, հաշվի առնելով Առաջին աշխարհամարտի ավարտից հետո աշխարհաքաղաքական իրադրության փոփոխությունները և համաշխարհային քաղաքականության մեջ ուժերի վերադասավորումները, երբ «Ազատ և Միացյալ Հայաստանի» գաղափարի կենսագործումը դարձել էր անիրատեսական, «ազգային օջախ» գոյությունը կարող էր հիմք դառնալ ապագայում այդ տարածքում ինքնավարության կարգավիճակն ինքնիշխանության հասցնելու համար: Թերևս նման զարգացումների մտահոգությամբ էր թուրքական կողմն անզիջում կեցվածք ընդունել հայերի համար անգամ «ազգային օջախ» ստեղծելու հարցում:

Իր ելույթում Քերզոնն անդրադարձավ Արդահանի, Վանի, Բիթլիսի ու Էրզրումի հայերի բնաջնջմանը, Կիլիկիայի հայերի՝ Ալեքսանդրետ, Հալեպ և Բեյրութ արտագաղթին՝ արձանագրելով, որ Թուրքիայի տարածքում մնացել է ընդամենը 130 հազար հայ, մինչդեռ մինչև համաշխարհային պատերազմը Օսմանյան կայսրություն-

6 Հայկական «ազգային օջախ» ստեղծելու գաղափարը շրջանառության մեջ է դրել «Հայաստան-Ամերիկա» հայասիրական ընկերության քարտուղար և Ամերիկայի եկեղեցիների ներկայացուցիչ Ջ. Մոնթգոմերիս (տես **Խատիսեան Ա.**, նշվ. աշխ., էջ 308-409):

նում նրանց թիվը հասնում էր 3 միլիոնի⁷: Կանխատեսելով թուրքական պատվիրակության հնարավոր հակափաստարկն առ այն, որ արևմտահայ գաղթականները կարող են վերաբնակեցվել Խորհրդային Հայաստանում, Քերզոնը նախապես նշեց, որ գաղթականության մեծամասնությունն այդ տարածքների աղքատ, գերբնակեցված լինելու, ինչպես նաև հաստատված կարգերի պատճառով այնտեղ վերաբնակեցումը ցանկալի չի համարում⁸: Բրիտանական պատվիրակության ղեկավարի այս դատողությունները հիմնված էին Ազգային պատվիրակության և Հայաստանի առաջին հանրապետության պատվիրակության՝ 1922 թ. նոյեմբերի 22-ին Լոզանի խորհրդաժողովին ներկայացրած միացյալ հուշագրում գետնոված վիճակագրական տվյալների և եզրակացությունների վրա⁹:

Այս հանգամանքներից ելնելով՝ Քերզոնն առաջարկում էր հայերի համախմբման կենտրոնը՝ «ազգային օջախը» ստեղծել Թուրքիայի հյուսիսարևելյան նահանգներում կամ Կիլիկիայի և Սիրիայի հարավարևելյան սահմանագծի վրա¹⁰: Հայկական «ազգային օջախի» ստեղծման համար այս տարածքների ընտրությունն ամենևին պատահական չէր, քանզի այդ տարբերակների շուրջ քննարկումներ էին ծավալվել դեռևս 1921 թ. փետրվարի 21-ից մարտի 14-ը տեղի ունեցած Լոնդոնի խորհրդաժողովի շրջանակներում: Բաղդադի երկաթգծի սկզբնամասում և Սիրիայի սահմանագծին հենարան ունենալու նպատակով հայկական «ազգային օջախը» Մեծ Բրիտանիան ցանկանում էր ստեղծել Կիլիկիայում: Ֆրանսիացիներն էլ, նույն պատճառներից ելնելով, առաջարկում էին այն ստեղծել Թուրքիայի հարավարևելյան նահանգներում¹¹: Ամերիկյան պատվիրակությունը նույնպես կողմնակից էր Կիլիկիայի տարբերակին, և ԱՄՆ Կոնգրեսում քննարկվում էր հայկական «ազգային օջախին» 20 մլն դոլարի փոխառություն տրամադրելու նախագիծը՝ պայմանով, որ դրա նկատմամբ կհաստատվեր Ազգերի լիգայի լիակատար վերահսկողությունը¹²:

7 Տե՛ս Lausanne Conference on Near East Affairs 1922-1923. Records of Proceedings and Draft Terms of Peace, London, 1923, էջ 178:

8 Տե՛ս նույն տեղում, էջ 179:

9 Տե՛ս **Խատիսեան Ա.**, նշվ. աշխ., էջ 368:

10 Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», т. 1, էջ 659:

11 Տե՛ս **Խատիսեան Ա.**, նշվ. աշխ., էջ 381, 433, 460-462:

12 Տե՛ս նույն տեղում, էջ 398:

Խորհրդաժողովի ռազմատարածքային հանձնաժողովի դեկտեմբերի 13-ի նիստում թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ փաշան Թուրքիայում հայկական «ազգային օջախի» ստեղծման համար տարածք առանձնացնելը որակեց երկրի մասնատման մի նոր փորձ՝ հայտարարելով, որ ո՛չ արևելյան նահանգներում, ո՛չ էլ Կիլիկիայում չկար տարածք, որի բնակչության մեծ մասը թուրքեր չլինեին, և որը հնարավոր էր որևէ կերպ անջատել թուրքական պետության տարածքից¹³: Հանձնաժողովի դեկտեմբերի 15-ի նիստում, հայկական «ազգային օջախի» ստեղծման լորդ Քերզոնի հարցադրմանն ի պատասխան, Իսմեթ փաշան նշեց, որ արևելյան նահանգների և Կիլիկիայի թուրք բնակչությունն անասելի զրկանքներ է կրել և այդքանից հետո չի պատրաստվում հանուն ուրիշների հեռանալու այդ տարածքներից: Թուրք պատվիրակը միաժամանակ ակնարկում էր, որ ցանկության դեպքում տերությունները հայերի համար «ազգային օջախ» կարող էին ստեղծել թուրքական պետությունից անջատված և իրենց վերահսկողության տակ անցած տարածքներում կամ էլ հենց իրենց երկրներում¹⁴:

Իսմեթ փաշան, անշուշտ, քաջ գիտակցում էր, որ հայերի համար «ազգային օջախի» ստեղծումը որևէ կերպ չէր սահմանափակելու թուրքական պետության ինքնիշխանությունն այդ տարածքում, պարզապես պետք է սահմանվեր Ազգերի լիգայի վերահսկողություն, որպեսզի թուրքական իշխանությունները հնարավորություն չունենային հայ բնակչության նկատմամբ շարունակելու խտրական քաղաքականությունն ընդհուպ մինչև ցեղասպանության իրագործումը:

Թուրքական միացյալ պատվիրակության վրա «ազգային օջախի» ստեղծման հարցում ճնշում գործադրելու նպատակով եվրոպական տերությունները խորհրդաժողովի փոքրամասնությունների գործերով ենթահանձնաժողովի 1922 թ. դեկտեմբերի 26-ի նիստին հրավիրել էին հայկական երկու պատվիրակությունների ներկայացուցիչներին:

Եթե Լոնդոնի խորհրդաժողովին Պողոս Նուբարն ու Ավետիս Ահարոնյանը կտրականապես դեմ էին արտահայտվում ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճռով ու Սևրի պայմանագրով երաշ-

13 Տե՛ս «Армянский вопрос на Лозаннской конференции. Извлечения из протоколов», էջ 17-18: Տե՛ս նաև «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», т. 1, էջ 659:
14 Տե՛ս «Армянский вопрос на Лозаннской конференции. Извлечения из протоколов», էջ 22:

խավորվող «Ազատ և Միացյալ Հայաստանի» գաղափարը «ազգային օջախով» փոխարինելուն, ապա աշխարհաքաղաքական իրադրության փոփոխության հետևանքով թուրքերի անզիջում կեցվածքի և դաշնակից տերությունների հաշտվողական դիրքորոշման պայմաններում Լոզանի խորհրդաժողովում հայկական պատվիրակությունները ստիպված եղան համակերպվել նոր իրողությունների հետ և վերանայել իրենց մոտեցումները: Ազգային պատվիրակությունը Գ. Նորատունկյանի գլխավորությամբ հակված էր ընդունելու «ազգային օջախի» ծրագիրը՝ կարծելով, թե դա հեշտ իրագործելի է, և իր ուշադրությունը կենտրոնացրել էր այդ հարցի վրա: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը սկզբում կանգնած էր Սևրի պայմանագրի դրույթների գործադրման դիրքերում, սակայն, ժամանակավրեպ համարելով Վիլսոնի իրավարար վճռի լիակատար գործադրումը, պատրաստ էր դիտարկելու «ազգային օջախի» ստեղծման տարբերակը¹⁵:

Ենթահանձնաժողովի անդամներին նախ բաժանվեց հայկական երկու պատվիրակությունների նախապես պատրաստած հուշագիրը, որում ներկայացված էին վիճակագրական տվյալներ, արծարծված էին գույքային և կազմակերպչական որոշ հարցեր, նշված էին այն միջազգային պայմանագրերն ու դիվանագիտական փաստաթղթերը, որոնք կարող էին դրվել հայկական «ազգային օջախի» ստեղծման հիմքում: Հուշագրի ներկայացումից հետո հաջորդաբար լսվեցին Ազգային պատվիրակության նախագահ Գ. Նորատունկյանի և Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանի ելույթները «ազգային օջախի» ստեղծման վերաբերյալ: Գ. Նորատունկյանի պատկերացմամբ՝ «ազգային օջախը» ունենալու էր բրիտանական գաղութներին հավասար կարգավիճակ և պետք է ստեղծվեր Խորհրդային Հայաստանին սահմանակից՝ Կարսի, Արդահանի, Էրզրումի, Վանի և Բիթլիսի նահանգների տարածքներում, որտեղ պետք է բնակեցվեին շուրջ 700 հազար արևմտահայեր¹⁶: Հակառակ դրան՝ Ահարոնյանը «ազգային օջախը» պատկերացնում էր Կիլիկիայում, այլ ոչ թե Խորհրդային Հայաստանին սահմանակից՝ Թուրքիայի հսկողության տակ անցած արևելյան նահանգներում՝ Ել-

15 Տե՛ս ԽԱՏԻՍԵԱՆ Ա., նշվ. աշխ., էջ 373:
16 Տե՛ս նույն տեղում, էջ 385-389:

ներով այդ տարածքների՝ բոլշևիկյան իշխանության տակ անցնելու հնարավոր հեռանկարից¹⁷: Չնայած այն հանգամանքին, որ հայկական պատվիրակությունների մասնակցությունը ենթահանձնաժողովի աշխատանքներին ոչ պաշտոնական բնույթ էր կրում, թուրքական պատվիրակներ Իսմեթ փաշան և Ռիզա Նուրի բեյը գրավոր բողոք ներկայացրին նրանց մասնակցության դեմ:

Փոքրամասնությունների գործերով ենթահանձնաժողովի 1923 թ. հունվարի 6-ի նիստին նախագահողը վերջին փորձն արեց գոնե ընդհանուր գծերով որոշակիություն մտցնելու հայկական «ազգային օջախի» հարցում: Թուրքական կողմին առաջարկվեց կնքել մի համաձայնագիր, որով Ազգերի լիգայի գիտությամբ և թուրքական կառավարության ընտրությամբ կառանձնացվեր մի տարածք, որտեղ Թուրքիայի տարբեր հատվածներում, ինչպես նաև արտասահմանյան երկրներում բնակվող հայերին կենտրոնանալու և համախմբվելու հնարավորություն կտրվեր: Նախագահողը հատուկ շեշտում էր, որ դա որևէ ձևով չէր սահմանափակելու Թուրքիայի ինքնիշխանությունն այդ տարածքում, բայց միևնույն ժամանակ կրավարարեր աշխարհի հասարակական կարծիքը՝ ցույց տալով, որ Թուրքիան իսկապես մտադիր էր բռնել առաջադիմության և արդիականացման ուղին: Առաջարկվում էր գոնե ընդհանուր գծերով քննարկել հայկական «ազգային օջախի» կառավարման կարգը, իսկ վերջնական լուծումը տրվելու էր Ազգերի լիգայի և թուրքական կառավարության կողմից: Սակայն թուրք պատվիրակներն անդրդվելի մնացին ինչպես հայերին, այնպես էլ ասորի-քաղղեսացիներին և բուլղար բնակչությանը վերաբերող հարցերում¹⁸:

Լորդ Քերզոնին ներկայացված 1923 թ. հունվարի 7-ի զեկույցում փոքրամասնությունների գործերով ենթահանձնաժողովի նախագահ, Իտալիայի ներկայացուցիչ Մոնտանան հայտնում էր, որ հայկական «ազգային օջախի» հարցի քննարկման ընթացքում թուրքական պատվիրակությունը Ռիզա Նուրի բեյի գլխավորությամբ ցուցադրաբար լքել է նիստերի դահլիճը¹⁹: Ռազմատարածքային հանձնաժողովի 1923 թ. հունվարի 9-ի նիստի ընթացքում լորդ Քերզոնը հատուկ անդրադարձ կատարեց այդ միջադեպին՝ խոր ավստասնք

17 Տե՛ս նույն տեղում, էջ 342, 433, 458:

18 Տե՛ս «Армянский вопрос на Лозаннской конференции. Извлечения из протоколов», էջ 24-25:

19 Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», т. 1, էջ 660:

արտահայտելով թուրքական պատվիրակության նման պահվածքի առնչությամբ²⁰:

1923 թ. հունվարի 6-ի և 9-ի նիստերից հետո պարզ դարձավ, որ հայկական «ազգային օջախի» հարցը խորհրդատողովի օրակարգից այլևս դուրս է մղվել: Հայկական պատվիրակությունները որոշեցին բողոք ներկայացնել դաշնակից տերությունների նման անվճռական պահվածքի համար՝ ընդգծելով, որ իրենց համար Հայկական հարցի լուծումը միայն հետաձգված է, քանի որ Լոզանի խորհրդատողովը անկարող եղավ այն լուծելու²¹:

Ռազմատարածքային հանձնաժողովում և փոքրամասնությունների գործերով ենթահանձնաժողովում հայկական «ազգային օջախի» հարցի այս քննարկումներից հետո Լոզանի խորհրդատողովի պաշտոնական նիստերը մոտ երկու ամսով ընդհատվեցին, սակայն այդ ընթացքում, բնականաբար, եվրոպական պատվիրակությունները շարունակում էին ոչ պաշտոնական բանակցությունները թուրքերի հետ: Երբ պաշտոնական նիստերը վերսկսվեցին, պարզ դարձավ, որ դաշնակից երկրների պատվիրակությունները թուրքերի հետ արդեն հասցրել էին ընդհանուր հայտարարի գալ իրենց համար առավել կարևոր համարվող՝ սևծովյան նեղուցների կարգավիճակի, օսմանյան պարտքի մարման, Մոսուլի հանքերի շահագործման հարցերի շուրջ²²: Բնական է, որ այս պայմաններում «ազգային օջախի» հարցը խորհրդատողովի օրակարգից արդեն դուրս էր եկել, և քննարկվում էր բացառապես հայերի խախտված որոշ իրավունքների վերականգնման հնարավորությունների հարցը:

2. Հայերի խախտված իրավունքների շուրջ քննարկումները Լոզանի խորհրդատողովում

Թուրքիայում մնացած փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության առնչությամբ Քերզոնն առաջարկում էր ներում շնորհել վերջին ինը տարվա ընթացքում²³ տեղի ունեցած իրադար-

20 Տե՛ս «Армянский вопрос на Лозаннской конференции. Извлечения из протоколов», էջ 27:

21 Տե՛ս **Խատիսեան Ա.**, նշվ. աշխ., էջ 402:

22 Տե՛ս «Армянский вопрос на Лозаннской конференции. Извлечения из протоколов», էջ V-VI:

23 Նկատի ունե՛ր Առաջին աշխարհամարտի սկզբից (1914 թ.) մինչև հույն-թուրքական պատերազմի (1919-1922 թթ.) ավարտն ընկած շրջանը:

ծությունների ժամանակ գրանցված հանցագործությունների մեջ մեղադրվող քրիստոնյաներին՝ հատուկ հարկի դիմաց ազատելով նրանց զինվորական ծառայությունից և ապահովելով նրանց ազատ տեղաշարժը, այդ թվում՝ երկրից անարգել դուրս գալը²⁴: Ստորագրվելիք պայմանագրում այս դրույթների ներառումը չափազանց կարևոր էր՝ հաշվի առնելով Թուրքիայում հաստատված քեմալական իշխանությունների կողմից քրիստոնյաների նկատմամբ շարունակվող ցեղասպանական քաղաքականությունը: Քրիստոնյաների և մասնավորապես հայերի իրավունքների պաշտպանության վերաբերյալ Քերզոնի առաջարկները պաշտպանեցին ֆրանսիական, իտալական և ամերիկյան պատվիրակությունների ղեկավարներ Բարրերը, Գարրոնին և Չայլդը:

Թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ փաշան անհամաձայնություն հայտնեց փոքրամասնություններին վերաբերող Թուրքիայի պարտավորությունների կատարման հարցով Ազգերի լիգայի վերահսկողության սահմանմանը, քանզի դա, նրա կարծիքով, տերություններին հնարավորություն կտար միջամտելու Թուրքիայի ներքին գործերին²⁵: Որպես հարցի արմատական լուծման տարբերակ նա առաջարկում էր հարևան պետությունների քրիստոնյա և մահմեդական բնակչության փոխանակման պայմանագրի կնքումը²⁶: Հունաստանի պատվիրակության ղեկավար Վենիզելոսը թուրքական կողմի առաջարկին արձագանքեց, որ բնակչության փոխանակումը փոքրամասնությունների իրավունքների հարցերը լիովին չի լուծում, քանզի անգամ փոխանակությունից հետո էլ Թուրքիայում կմնա հույն և հայ բնակչություն²⁷: Վենիզելոսի այս դատողությունները հիմնված էին նախկին դառը փորձի վրա, երբ թուրքական իշխանությունները բնակչության փոխանակության անվան տակ, ըստ էության, իրականացնում էին կայսրության հույն բնակչության բռնագաղթեցումը դեպի Հունաստան՝ մինչ այդ բռնագաղթելով նրանց

24 Տե՛ս նույն տեղում, էջ 6:

25 Տե՛ս նույն տեղում, էջ 14:

26 Ակնարկվում էին բալկանյան պատերազմներից հետո՝ 1913 թ. նոյեմբերի 15-ին, Օսմանյան կայսրության և Բուլղարիայի միջև կնքված «Բնակչության փոխանակման մասին» պայմանագիրը և Հունաստանի հետ նմանատիպ պայմանագրի նախնական համաձայնությունը, որոնցով նախատեսվում էր բալկանյան պետություններից մահմեդականների և Օսմանյան կայսրությունից բուլղարների ու հույների կամավոր արտագաղթի կազմակերպումը (տե՛ս **Վարդանյան Գ.**, Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը (1914-1923 թթ.), Տր., Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., 2012, էջ 78-79):

27 Տե՛ս «Армянский вопрос на Лозаннской конференции. Извлечения из протоколов», էջ 14:

անշարժ գույքն ու ողջ ունեցվածքը²⁸: Պատահական չէ, որ հույն պատվիրակը խորհրդատուական անդամ պետություններին հիշեցնում էր իրենց կողմից փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության կոնվենցիայի ստորագրման և այդ փաստաթղթով ստանձնած պարտավորությունների մասին²⁹:

Թուրքիայի տարածքում մնացած քրիստոնյաների վիճակի մասին տեղեկություններ ստանալու նպատակով Լոզանի խորհրդատուական հատուկ հրավիրվել էր Ազգերի լիգայի ռազմագերիների և փախստականների հարցերով գլխավոր հանձնակատար Ֆրիտյոֆ Նանսենը, ով 1922 թ. դեկտեմբերի 1-ին հատուկ գեկույցով հանդես եկավ ռազմատարածքային հանձնաժողովի 8-րդ նիստում: Նկարագրելով հայերի և հույների ծանր կացությունը՝ նա ներկաների ուշադրությունը հրավիրեց բնակչության փոխանակման պայմանագրում³⁰ կամավորության սկզբունքի ամրագրման, պայմանագրի գործողության տարածքի հստակեցման, ինչպես նաև փախստականների հարցերով հստակ գործառնություններով հատուկ հանձնաժողովի³¹ ստեղծման հարցերի վրա³²:

Թեև հույն-թուրքական համաձայնագիրը բացառապես վերաբերում էր հույն և մահմեդական բնակչության փոխանակմանը, այդուհանդերձ, դրա դրույթների գործադրումը բացասական հետևանքներ ունեցավ նաև հայերի համար: Քանի որ Լոզանի պայմանագրով Արևելյան Թրակիան ամբողջությամբ վերադարձվեց Թուրքիային, իսկ բնակչության փոխանակման հույն-թուրքական համաձայնագրով հույները պետք է հեռանային այդ տարածքներից, հասկանալի էր, որ հայերն այդ տարածքներում այլևս ապահով չէին կարող լինել, ուս-

28 Տե՛ս Վարդանյան Գ., նշվ. աշխ., էջ 81-85:

29 Տե՛ս «Армянский вопрос на Лозаннской конференции. Извлечения из протоколов», էջ 14:

30 Լոզանի խորհրդատուական շրջանակներում 1923 թ. հունվարի 30-ին ստորագրված «Թուրքիայի և Հունաստանի միջև բնակչության փոխանակման մասին» պայմանագիրը վերաբերում էր Թուրքիայի քաղաքացի շուրջ 200 հազար հույների և Հունաստանի քաղաքացի շուրջ 350 հազար մահմեդականների հարկադիր փոխանակությանը, ինչը չէր տարածվում Կ. Պոլսի հույների և Արևմտյան Թրակիայի մահմեդականների վրա, որոնք շարունակելու էին մնալ իրենց տեղերում (տե՛ս Ազգողու Յ., Անիծված առյուծի բնաջնջումը: Մեր Անատոլիայի հելլենականության մեթոդական բնաջնջման գործընթացի իրար հաջորդող փուլերը, Եր., «Ճարտարագետ» հրատ., 2007, էջ 110-111):

31 1923 թ. սեպտեմբերի 29-ին Հունաստանը և Ազգերի լիգան ստորագրեցին «Փախստականների հարցերի կարգավորման (վերաբնակեցման) հանձնաժողով ստեղծելու մասին» արձանագրություն, և հատկանշական է, որ Ազգերի լիգայի կողմից փախստականների հանձնաժողովի նախագահ նշանակվեց Հայոց ցեղասպանության ընթացքում Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն (տե՛ս Crossing the Aegean, an Appraisal of the 1923 Compulsory Population Exchange between Greece and Turkey, ed. by R. Hirschon, New York-Oxford, 2006, էջ 14):

32 Տե՛ս Lausanne Conference on Near East Affairs 1922-1923. Records of Proceedings and Draft Terms of Peace, էջ 113-117:

տի հարյուրհազարավոր հույների հետ հարկադրված Արևելյան Թրակիայից դեպի Մակեդոնիա և Արևմտյան Թրակիա արտագաղթեցին շուրջ 38 հազար հայ գաղթականներ³³:

Քրիստոնյաների իրավունքների պաշտպանության հարցերի առնչությամբ թուրքական պատվիրակությունը սահմանափակվեց խոստումով, որ ոչ մուսուլման փոքրամասնությունները Թուրքիայում կունենան այն իրավունքները, որոնք սահմանված են եվրոպական պետությունների կողմից ընդունված փոքրամասնությունների մասին կոնվենցիայի դրույթներով, և ոչ մուսուլմանների համար համաներում կհայտարարվի³⁴:

Հայկական հարցը Լոզանի խորհրդաժողովում վերջին անգամ քննարկվեց հաշտության պայմանագրի ստորագրմանը նախորդած ռազմատարածքային հանձնաժողովի հունիսի 4-ի և հուլիսի 17-ի նիստերից անմիջապես առաջ, երբ գրեթե բոլոր հարցերն արդեն լուծվել էին փոխադարձ զիջումներով³⁵: Հայկական «ազգային օջախի» հարցն այլևս չէր բարձրացվում, խոսվում էր միայն քրիստոնյաների, այդ թվում՝ հայերի համար համաներում հայտարարելու և նրանց իրենց բնակավայրեր վերադառնալու իրավունք տալու մասին:

Ռազմատարածքային հանձնաժողովի հունիսի 4-ի նիստում Կ. Պոլսում բրիտանական կոմիսար Հորացիոս Ռումբուլդի՝ վերադարձող հայերին ներում շնորհելու հարցին Ռիզա Նուրի բեյը պատասխանեց, որ ներում շնորհվել է Թուրքիայում ապրողներին, իսկ երկիր կարող են վերադառնալ միայն խաղաղասեր անձինք: Միննույն ժամանակ թուրքական կողմն իրեն իրավունք էր վերապահում անվտանգությունից բխող միջոցներ ձեռնարկելու անկարգություններ հրահրողների, հեղափոխականների, մահափորձ կատարողների դեմ³⁶: Այս կապակցությամբ բրիտանացի պատվիրակը տեղին դիտարկում արեց, թե այս կամ այն գաղթականի խաղաղասիրությունը պարզելու համար նախ պետք է նրան թույլ տրվի մուտք գործել երկիր, ապա՝ իրականացվի անաչառ քննություն³⁷:

33 Տե՛ս Կոկինոս Պ., Հունահայ գաղութի պատմությունից (1917-1927), Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965, էջ 25:

34 Տե՛ս «Армянский вопрос на Лозаннской конференции. Извлечения из протоколов», էջ 22-23:

35 Տե՛ս նույն տեղում, էջ 28:

36 Տե՛ս **Махмуриян Г.**, Армения в политике США 1917-1923 гг., Ер., 2018, էջ 555: Տե՛ս նաև **Marashlian L.**, The Armenian Question from Sevres to Lausanne, Economics and Morality in American and British Policies 1920-1923, PhD dissertation, LA, UCLA, 1992, էջ 765-766:

37 Տե՛ս «Армянский вопрос на Лозаннской конференции. Извлечения из протоколов», էջ 33:

Ի վերջո, Իսմելթ փաշան հրաժարվեց քննարկել երկրից հեռացած շուրջ 100 հազար հայերի զանգվածային վերադարձի հարցը՝ նշելով, որ խնդիրն առնչվում է թուրքական պետության անվտանգությանը: Թուրքական կողմի այս դիրքորոշումն իր արտացոլումը գտավ խորհրդաժողովի ներման ենթահանձնաժողովի 1923 թ. մայիսի 9-ի նիստում ընդունված ներման հռչակագրի նախագծի տեքստում, որում նշվում էր, որ ենթահանձնաժողովը հնարավոր չհամարեց քննարկել Թուրքիայից հեռացած որոշ անձանց, մասնավորապես հայերին ներման ուժով իրենց երկիր ազատ վերադառնալու իրավունք տալու հարցը³⁸: Ֆրանսիայի պատվիրակ գեներալ Պելլեն թուրքական կողմի նման անգիջում դիրքորոշման առնչությամբ արդարացիորեն նշեց, որ միջազգային իրավունքի կարևոր նորմերից մեկը պահանջում է, որ հանցանք չկատարած գաղթականներն իրենց տները վերադառնալու իրավունք ստանան: Ֆրանսիայի պատվիրակն արդարացիորեն եզրակացրեց, որ հայերին ներման արժանանալու և վերադարձի իրավունքից զրկելու միջոցով թուրքական իշխանությունները նպատակադրվել են բռնազավթել և շահագործել նրանց լքված գույքը³⁹:

Փաստորեն, թուրքական դիվանագիտությունը Լոզանի խորհրդաժողովում կիրառեց իր ավանդական հնարքը. նախ հայերին իրենց բնակավայրեր վերադառնալու իրավունք տալու կեղծ խոստման միջոցով չեզոքացրեց հայկական «ազգային օջախ» ստեղծելու դաշնակից տերությունների առաջարկը, իսկ երբ այդ հարցն արդեն օրակարգից դուրս մղվեց, հրաժարվեց հայերին ներում շնորհելու և նրանց վերադարձի իրավունք տալու իր խոստումից:

Քանի որ Անտանտի տերությունները չկարողացան թուրքերին պարտադրել հայերի համար «ազգային օջախի» ստեղծումը, Հայաստանի միջազգային լիգան՝ Էդ. Նևիլի գլխավորությամբ, դաշնակից տերությունների ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում առաջարկեց, որ մինչև Լոզանի խորհրդաժողովի ավարտը տերություններն ընդունեն հռչակագիր, որում հրապարակայնորեն կհայտարարեն, որ Հայկական հարցը լուծված չեն համարում, ինչը հայե-

38 Տե՛ս նույն տեղում, էջ 31-32:

39 Տե՛ս նույն տեղում, էջ 34:

րին գոնե ինչ–որ հույս կներշնչեր: Բացի այդ՝ լիզան խնդրում էր ստեղծել եվրոպական տարբեր երկրներում ապաստանած հայ գաղթականների իրավունքներով զբաղվող միջազգային հանձնաժողով, որն առաջնահերթ պետք է լուծեր այլ պետությունների կողմից ընդունվող անձը հաստատող փաստաթղթերով նրանց ապահովելու հարցը⁴⁰: Հայասերների միջազգային կազմակերպության դիմումին տերությունների անունից Քերզոնը պատասխանեց, որ հայերին սին հույսեր ներշնչելը ձիշտ չի համարում⁴¹:

Նման պատասխանով Քերզոնը հասկացնել էր տալիս, որ դաշնակիցները միջոցներ չունեն թուրքերին ստիպելու վերանայել իրենց դիրքորոշումը և Հայկական հարցի պատճառով չեն պատրաստվում ընդհատելու բանակցությունները թուրքերի հետ, առավել ևս ռազմական գործողություններ վերսկսելու նրանց դեմ⁴²: Լոզանի խորհրդաժողովի ընթացքը ցույց տվեց, որ Հայկական հարցը եվրոպական դիվանագիտությունը հերթական անգամ օգտագործեց որպես լծակ՝ իր համար ավելի կարևոր հարցերում թուրքերից առավելագույն զիջումներ կորզելու նպատակով:

3. Լոզանի և Սևրի պայմանագրերի հարաբերակցությունը. Սևրի պայմանագրի՝ Լոզանի պայմանագրով փոխարինված լինելու հարցի շուրջ

Սևրի և Լոզանի պայմանագրերի հարաբերակցության շուրջ հակադիր մոտեցումներով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում այդ հարցի առնչությամբ անելու որոշ պարզաբանումներ:

Սևրի պայմանագրի վերանայման առաջին փորձն արվեց Ֆրանսիայի և Իտալիայի առաջարկով 1921 թ. փետրվարի 21–ից մարտի 14–ը Անտանտի տերությունների և պատերազմում պարտված Գերմանիայի և Օսմանյան կայսրության մասնակցությամբ Լոնդոնում

40 Հայ գաղթականներին փաստաթղթերով ապահովելու հարցը լուծվեց Ազգերի լիգայի ռազմագերիների և գաղթականների հարցերով գլխավոր հանձնակատար, հայ ժողովրդի բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի ջանքերով, երբ տասնյակ հազարավոր հայ գաղթականներ ստացան Ազգերի լիգայի փախստականի կապույտ անձնագրեր, որոնք հայտնի են որպես «նանսենյան անձնագիր» (տես **Արզումանյան Ս.**, Նանսենը և Հայաստանը (Փաստագրական նյութեր Ֆրիտյոֆ Նանսենի հայանպաստ գործունեության մասին), Եր., «Հայաստան» հրատ., 1986, էջ 113–115):

41 Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», т. 1, էջ 658:

42 Տե՛ս նույն տեղում, էջ 660:

տեղի ունեցած խորհրդատողովի ընթացքում: Խորհրդատողովում փորձ արվեց Սևրի դաշնագրի՝ Հայաստանի և հայ ժողովրդի օրինական իրավունքներն արտահայտող դրույթները փոխարինելու հայկական «ազգային օջախի» անորոշ գաղափարով: Մինչ խորհրդատողովը բրիտանացի դիվանագետները մշակել էին Հայաստանին անմիջականորեն վերաբերող 88-93-րդ հոդվածները նոր բովանդակությամբ երեք հոդվածներով փոխարինելու մի նախագիծ⁴³:

Սևրի պայմանագիրը Լոնդոնում կարող էր փոխարինվել միայն նոր փաստաթղթի ընդունումով, որի նախաբանում (պրեամբուլա) պետք է հստակ նշվեր, որ տվյալ պայմանագիրը վերանայում կամ փոփոխություններ է ստցնում նախկինում ստորագրված Սևրի պայմանագրում: Լոնդոնի խորհրդատողովի ընթացքում թուրքական կողմին ներկայացված 10 կետերից բաղկացած նախագծի 9-րդ կետով Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող 88-93-րդ հոդվածների չեղարկման դիմաց Թուրքիային առաջարկվում էր ընդունել հայկական «ազգային օջախի» ստեղծումը ասիական Թուրքիայի արևելյան նահանգներում, որը պետք է վերահսկվեր Ազգերի լիգայի խորհրդի նշանակած հանձնաժողովի կողմից⁴⁴: Լոնդոնի խորհրդատողովին զուգահեռ Մոսկվայում ընթացող բանակցություններում բոլշևիկներից ստացած գիշումներից ոգևորված՝ թուրքական պատվիրակությունը մերժեց դաշնակից տերությունների այդ առաջարկը⁴⁵:

Այսպիսով՝ Լոնդոնի խորհրդատողովում որևէ փաստաթուղթ չընդունվեց, ինչը նշանակում է, որ Սևրի պայմանագրի վերանայման այդ փորձը ձախողվեց: Ձախողվեցին նաև քեմալա-

43 Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության Մերձավոր Արևելքի բաժնի պատասխանատու Օսբորնը և լորդ Քերզոնի քարտուղար Նիքոլսոնը 1921 թ. փետրվարի 17-ին շրջանառության մեջ դրեցին հուշագրի մի նախագիծ, որով Սևրի պայմանագրի 88-93-րդ հոդվածների փոխարեն առաջարկվում էին հետևյալ երեք հոդվածները: 1. Թուրքիան ճանաչելու էր Խորհրդային Հայաստանի անկախությունը նախապատերազմյան ռուսական սահմաններում և հրաժարվելու էր Կարսի, Ալեքսանդրապոլի և Արդահանի շրջանների նկատմամբ բոլոր պահանջներից, ինչի դիմաց Հայաստանը հրաժարվելու էր Վանի, Էրզրումի և Բիթլիսի նահանգների տարածքներից և Տրապիզոնի նահանգով դեպի Սև ծով ելքից: 2. Թուրքիան ճանաչելու էր իր տարածքում հայերի ինքնավարության իրավունքը և Ազգերի լիգային էր զիջելու Կիլիկիայում արևմտահայ գաղթականների վերադարձի համար տարածք, որը ներառելու էր Մերսին-Տարսուս-Ադանա-Օսմանիե սահմանագծից մինչև Հաճն-Չեյթուն-Մարաշ սահմանագիծն ընկած հատվածը: Այդ տարածքի կառավարումը հանձնվելու էր Ազգերի լիգայի նշանակած հանձնաժողովին, որի կազմում ընդգրկվելու էին նաև Թուրքիայի և Հայաստանի ներկայացուցիչները: 3. Թուրքիան պարտավորվում էր ապահովել պետության այլ վայրերից իրենց համար նախատեսված տարածք վերադառնալ ցանկացող հայերի տեղափոխությունը, ինչպես նաև տվյալ տարածքից հեռանալ ցանկացող թուրքերի այլ վայրեր տեղափոխությունը (տես «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917)», էջ 696):

44 Տես **Խատիսեան Ա.**, նշվ. աշխ., էջ 341:

45 Տես նույն տեղում, էջ 344:

կաննների ընդունած «Ազգային ուխտի» շրջանակներում Թուրքիայի սահմանների միջազգայնորեն ճանաչման թուրքական միացյալ պատվիրակության ջանքերը:

Խորհրդաժողովի ընթացքում ունեցած իր ելույթում Ա. Ահարոնյանը հատուկ շեշտեց, որ թուրքական պատվիրակության ղեկավար Բեքիր Սամի բեյի հիշատակած Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրվել է սպառնալիքի և ճնշման տակ, և, բացի այդ, այն վավերացված չէ և օրինական ուժ չի ստացել⁴⁶: Թուրքական կողմին Լոնդոնում այդպես էլ չհաջողվեց հասնել 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրով Թուրքիային Հայաստանի Հանրապետության Կարսի նահանգի, Արդահանի և Սուրմալուի գավառի զիջման միջազգային ճանաչմանը⁴⁷:

Ի տարբերություն Սևրի պայմանագիրը փոփոխելու նպատակով հրավիրված Լոնդոնի ձախողված խորհրդաժողովի՝ 1922-1923 թթ. Լոզանի միջազգային խորհրդաժողովում հավաքված տերությունները պաշտոնապես չեն հայտարարել Սևրի պայմանագրի վերանայման իրենց մտադրության մասին: Որովհետև **Լոզանի խորհրդաժողովը հրավիրվել էր միանգամայն այլ՝ հույն-թուրքական պատերազմի արդյունքները, Թուրքիայում հաստատված քեմալական նոր իշխանությունների կողմից Օսմանյան կայսրությունից նախորդ պայմանագրով արդեն իսկ տարածքների օտարման փաստն ու օսմանյան պարտքերի վճարումը վերահաստատելու և դրա դիմաց վերջիններիս որպես Թուրքիայի օրինական իշխանություն ճանաչելու հարցերը քննարկելու նպատակով:**

Այս հարցերի քննարկմանը զուգահեռ՝ Լոզանի խորհրդաժողովում կրկին փորձ արվեց Հայկական հարցը «լուծելու» հայկական «ազգային օջախի»՝ Լոնդոնի խորհրդաժողովում ձախողված գաղափարի վերակենդանացման միջոցով, սակայն թուրքական կողմը կրկին մերժեց այդ առաջարկը: **Այսպիսով, ինչպես Լոնդոնում, այնպես էլ Լոզանում մերժելով Հայկական հարցի լուծման՝ «ազգային օջախի» ստեղծման տարբերակը, թուրքերը միաժամանակ մերժում էին նաև Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող համապատասխան դրույթների վերանայումը:**

46 Տե՛ս նույն տեղում, էջ 340:

47 Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1917)», էջ 776:

1923 թ. հուլիսի 24-ին մի կողմից Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հունաստանի, Ռումինիայի, Հարավսլավիայի և մյուս կողմից Թուրքիայի միջև կնքված Լոզանի պայմանագրի 2-րդ հոդվածով հստակեցվում էին Թուրքիայի սահմանները Բուլղարիայի և Հունաստանի, իսկ 3-րդ հոդվածով՝ Սիրիայի և Իրաքի հետ⁴⁸: Պայմանագրի 16-րդ հոդվածի առաջին պարբերությամբ Թուրքիան հրաժարվում էր այն բոլոր տարածքների նկատմամբ իր իրավունքներից, որոնք ընկած էին տվյալ պայմանագրով գծված սահմաններից դուրս⁴⁹: **Փաստորեն, Լոզանի պայմանագրով հստակեցվում էին Թուրքիայի միայն արևմտյան և հարավային սահմանները, և ոչ մի խոսք չկար արևելյան, մասնավորապես՝ Հայաստանի հետ սահմանների մասին: Իսկ թուրքական կողմի այն «պարզաբանումները», թե Լոզանում արևելյան սահմանների ու մասնավորապես Հայաստանի հետ սահմանի հարցը չքննարկվեց, քանի որ այն արդեն իսկ լուծված էր Մոսկվայի և Կարսի պայմանագրերով, չեն դիմանում քննադատության այն պարզ պատճառով, որ եվրոպական տերությունների գաղափարական ու քաղաքական հակառակորդ Խորհրդային Ռուսաստանի հետ կնքված երկկողմ գործարքը Լոզանի խորհրդաժողովի մասնակից տերությունների համար պարտադիր լինել չէր կարող:**

Լոնդոնի խորհրդաժողովի փոքրամասնությունների գործերով ենթահանձնաժողովի 1922 թ. դեկտեմբերի 26-ի նիստին ունեցած ելույթում Ա. Ահարոնյանը հայտարարեց, որ դաշնակից տերությունները չեն ընդունում Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, և ներկաներից ոչ ոք չառարկեց այդ պնդմանը⁵⁰: Իբրև ասվածի ապացույց հատկանշական է նաև այն փաստը, որ Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությանը Լոզանի վեհաժողովում թույլ տրվեց մասնակցել միայն սևծովյան նեղուցների հարցերին նվիրված բանակցություններին: Մյուս բոլոր հարցերում տերությունները թուրքերի հետ վարում էին առանձին բանակցություններ: Մոսկվայում և Կարսում բոլշևիկներից ստանալով իրենց ուզածը՝ թուրքերն արդեն կորցրել էին հետաքրքրությունը խորհրդային «դաշնակցի» նկատմամբ և նույնպես շահագրգռված չէին, որ եվրոպական տերությունների հետ իրենց

48 Տե՛ս Treaty of Lausanne, <http://wwi.lib.byu.edu/index.php> (մուտք՝ 25.03.2023):

49 Տե՛ս նույն տեղում:

50 Տե՛ս ԽԱՄԱՏՈՒՄԻ Ա., նշվ. աշխ., էջ 390:

բանակցություններին մասնակից լինեին Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչները: Նույնիսկ նման պայմաններում խորհրդային պատվիրակությունն անհինքնասիրաբար 1922 թ. դեկտեմբերի 30-ին վեհաժողովի մասնակիցներին ներկայացրեց Թուրքիայի տարածքային ամբողջականության պաշտպանության վերաբերյալ հուշագիր, որը, սակայն, չարժանացավ համաժողովի մասնակիցների ուշադրությանը⁵¹:

Այսպիսով՝ Սևրի պայմանագիրը փոփոխված կամ փոխարինված չէ Լոզանի պայմանագրով, քանի որ չեն ապահովվել միջազգային պայմանագրերի փոփոխման համար նախատեսված հետևյալ պարտադիր պայմաններն ու ընթացակարգերը.

1. **Սևրի պայմանագիրը փոփոխելու կամ նորով փոխարինելու մտադրության մասին այն ստորագրած պետությունների կողմից Լոզանի խորհրդաժողովում չի հայտարարվել**⁵²:

2. **Սևրի և Լոզանի պայմանագրերին ծնունդ տվող կողմերը տարբեր են. Սևրի պայմանագիրը ստորագրած Բելգիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Չեխոսլովակիան, Տեջազը, ինչպես նաև Հայաստանը Լոզանի պայմանագրի կողմ չեն:**

Միջազգային պայմանագրերի իրավունքի հանրահայտ նորմ է, որ պայմանագիրը ստորագրած պետություններն իրավունք ունեն մասնակցելու դրա փոփոխման համար տարվող բանակցություններին և փոփոխված տարբերակի մշակմանը⁵³: Հայաստանը՝ իբրև Սևրի պայմանագիրը ստորագրած պետություններից մեկը, ավելի ստույգ՝ նրա իրավահաջորդ Խորհրդային Հայաստանը նույնիսկ իրավիրված չի եղել Լոզանի խորհրդաժողովին⁵⁴: Այդ խորհրդաժողովին Հայաստանի բացակայությունը հիմք է տալիս խոսելու միանգամայն նոր և Սևրի հետ առնչություն չունեցող Լոզանի պայմանագրի մասին: Քանի որ նույնական չեն պայմանագրի կողմերը և սուբյեկտները, ուստի և Լոզանի պայմանագիրն անգոր և անվավեր է այնքանով, որքանով

51 Տե՛ս **Горохов И., Замятин Л., Земсков И., Г. В. Чичерин** – дипломат ленинской школы, М., изд. Политической литературы, 1973, էջ 179-183:

52 Տե՛ս «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Կիեննայի 1969 թ. կոնվենցիայի 41-րդ հոդվածը, «Международное право в документах», сост. сборника **Н. Т. Блатова**, М., изд. Юрид. лит., 1982, էջ 83:

53 Տե՛ս նույն տեղում, էջ 82:

54 Խորհրդային Հայաստանը չներկայացնող արևմտահայերի Ազգային պատվիրակությանը՝ Գ. Նորատունկյանի գլխավորությամբ, և Հայաստանի Հանրապետության՝ Ա. Սիարոնյանի գլխավորած պատվիրակությանը թույլ տրվեց ոչ պաշտոնապես հանդես գալ միայն Լոզանի խորհրդաժողովի փոքրամասնությունների գործերով ենթահանձնաժողովի նիստերից մեկում:

որ կարող է փոփոխության ենթարկել Սևրի պայմանագրում ամրագրված Հայաստանի իրավունքները⁵⁵:

3. Սևրի և Լոզանի պայմանագրերի առարկաները նույնպես տարբեր են: Լոզանի պայմանագրում չկա ոչ մի հիշատակություն Սևրի և ոչ մի դրույթ Հայաստանի կամ հայերի մասին: Սևրի պայմանագրի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչմանը և նրա սահմանների ձգգրտմանը վերաբերող դրույթները Լոզանի պայմանագրում բացակայում են: Լոզանի պայմանագրում շրջանցվեցին նաև Սևրի պայմանագրի՝ Հայոց ցեղասպանության համար պատասխանատվություն սահմանող հոդվածների դրույթները: Այս տարբերությունները կրկին փաստում են, որ Լոզանի պայմանագիրը չի փոխարինել Սևրի պայմանագրին: Անգամ թուրք պատմաբաններն են ընդունում, որ Լոզանի պայմանագրում հայերի ջարդերի և Հայաստանի իրավունքների չհիշատակվելը թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ փաշայի և լորդ Քերզոնի միջև ձեռք բերված գաղտնի պայմանավորվածության հետևանքն էր⁵⁶:

4. Միջազգային պայմանագրային իրավունքի նորմերի համաձայն՝ պայմանագրի կողմերը կարող են համաձայնության գալ փոխելու պայմանագիրը միայն իրենց միջև, եթե խնդրո առարկա փոփոխությունը չի խախտում ստորագրող մյուս կողմերի՝ պայմանագրով նախատեսված իրավունքները⁵⁷: Այսինքն՝ Լոզանի պայմանագրով նոր պարտավորություններ են առաջացել Սևրի պայմանագրի մասնակից միայն այն պետությունների համար, որոնք ստորագրել են Լոզանի պայմանագիրը, իսկ Լոզանի պայմանագրի կողմ չհանդիսացող Սևրի պայմանագիրը ստորագրած պետությունների համար Լոզանի պայմանագիրը որևէ ազդեցություն չի կարող ունենալ Սևրի պայմանագրում ամրագրված իրենց իրավունքների վրա:

Սևրի և Լոզանի պայմանագրերի հոդվածների համեմատական վերլուծությունից պարզ է դառնում, որ Լոզանի պայմանագրում անգամ վերահաստատվել են Սևրի պայմանագրի որոշ դրույթներ թուր-

55 Տե՛ս Թորիկեան Շ., նշվ. աշխ., էջ 88-89:

56 Տե՛ս «Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества», т. 2, ч. 2, էջ 508:

57 Տե՛ս «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 41-րդ հոդվածը, «Международное право в документах», էջ 83:

քական պետությունից արաբական երկրների անջատման վերաբերյալ՝ հպատակ ժողովուրդների նկատմամբ իշխանության չարաշահման սկզբունքով, որով պետք է անջատվեին նաև Հայաստանը և Քրդստանը, սակայն վերջինների վերաբերյալ հողվածները տեղ չգտան Լոզանի պայմանագրում:

Արևելյան սահմանների վերաբերյալ թուրքական պնդումներին թերևս պատասխան է տրվում Լոզանի պայմանագրի 16-րդ հոդվածի երկրորդ պարբերությամբ, որում նշվում է, որ տվյալ հոդվածի դրույթները չեն տարածվում բարիդրացիական հարաբերություններից բխող այն հատուկ պայմանավորվածությունների վրա, որոնք ձեռք են բերվել կամ կարող են ձեռք բերվել Թուրքիայի և նրան սահմանակից երկրներից որևէ մեկի միջև⁵⁸: Այս ձևակերպումները թույլ են տալիս եզրակացնել, որ Լոզանի պայմանագրով չհստակեցվող արևելյան սահմանների հարցը լուծվել կամ լուծվելու է ոչ թե ինչ-որ պայմանագրի կամ համաձայնագրի, այլ «հատուկ պայմանավորվածությունների» միջոցով: Այս առումով տեղին է հիշել 1899 և 1907 թթ. ընդունված «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» Հաագայի կոնվենցիան, որի դրույթների համաձայն՝ միջազգային իրավարարությանը դիմելու դեպքում վեճի կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերում ընդունելու իրավարարի ցանկացած վճիռ: Լոզանի պայմանագրի 16-րդ պարբերությունը Հաագայի կոնվենցիայի այս դրույթների համատեքստում դիտարկելու դեպքում կարելի է եզրակացնել, որ Անտանտի տերությունների, ինչպես նաև հարևան երկու պետությունների՝ Թուրքիայի և Հայաստանի միջև ձեռք է բերվել հայ-թուրքական սահմանը գծելու հարցում ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարարությանը դիմելու «հատուկ պայմանավորվածություն», որի որոշումը կողմերի համար լինելու էր պարտադիր: Լոզանի պայմանագրի 16-րդ հոդվածում այս պարբերության առկայությունը, այսպիսով, անուղղակիորեն վերահաստատում է հայ-թուրքական սահմանի հստակեցման հարցով ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի կայացրած իրավարար վճիռը:

Լոզանի պայմանագրի հողվածներով թուրքական նոր իշխանություններն ընդունել են նաև Սևրի պայմանագրի այն դրույթները, որոնք վերաբերում էին բռնագրավված լքյալ գույքը տերերին կամ

58 Տե՛ս Treaty of Lausanne:

նրանց ժառանգներին վերադարձնելուն: Լոզանի պայմանագրի 3-րդ բաժնում՝ «Տնտեսական դրույթներ» հատվածում, կան «Հիմնական իրավունքների և շահերի» վերաբերյալ դրույթներ: Դրա 65-րդ հոդվածի երրորդ պարբերությամբ 1915 թ. տեղահանությունն ու սպանությունները որակվում են որպես «անօրինական կերպով ձեռնարկված ռազմական միջոցներ», և սահմանվում է, որ դրանց հետևանքով մարդկանց կրած վնասները պետք է փոխհատուցվեն⁵⁹: Տվյալ հոդվածի համաձայն՝ ողջ մնացած յուրաքանչյուր հայ կամ սպանված հայի ժառանգ տեղահանության հետևանքով բռնագավթված իր գույքը նախկին վիճակով վերադարձնելու իրավունք էր ստանում:

Լոզանի պայմանագրի 66-րդ հոդվածը գրեթե նույնությամբ կրկնում է Սևրի պայմանագրի 144-րդ հոդվածի այն դրույթը, ըստ որի՝ գույքային հարցերի շուրջ վեճերը պետք է կարգավորվեն խառը հանձնաժողովների կողմից, իսկ վերադարձվող գույքը պետք է ազատված լինել ցանկացած պարտքից, որով այն կարող էր ծանրաբեռնված լինել նոր տերերի կողմից: Ավելին՝ նոր սեփականատերերին և օգտագործողներին հատուցում տրամադրելու հարցը թողնվում էր թուրքական պետությանը: Լոզանի պայմանագրի 65-րդ հոդվածում էլ վերաշարադրված են Սևրի պայմանագրի 285-րդ և 288-րդ հոդվածների այն դրույթները, համաձայն որոնց՝ դաշնակից երկրի կամ նոր պետության հպատակություն ձեռք բերած նախկին թուրքահպատակների ունեցվածքն ու գույքային իրավունքներն ինչպես Թուրքիայում, այնպես էլ նրանից անջատված տարածքներում պետք է վերադարձվեն նախկին տերերին⁶⁰: Փաստորեն, Լոզանի պայմանագրի 65-րդ և 66-րդ հոդվածները Սևրի պայմանագրի 144-րդ, 285-րդ և 288-րդ հոդվածների վերախմբագրված տարբերակներն են:

4. Ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցում Թուրքիայի նոր պարտավորությունները ըստ Լոզանի պայմանագրի

Լոզանի պայմանագրով Թուրքիայի վրա նոր պարտավորություններ էին դրվում իր տարածքում բնակվող ոչ մահմեդական

59 Տե՛ս նույն տեղում:

60 Տե՛ս նույն տեղում:

բնակչության, մասնավորապես՝ հունական, հայկական և հրեական համայնքների իրավունքների պաշտպանության առնչությամբ: Այս առումով պետք է նշել, որ Լոզանի պայմանագրի 37-44-րդ հոդվածներով սահմանված՝ ոչ մահմեդական հպատակների իրավունքների պաշտպանության մասին դրույթները գրեթե բառացիորեն կրկնում էին Բեռլինի պայմանագրի 62-րդ հոդվածի պահանջները, ինչն ինքնին նշանակում էր, որ տերություններն արձանագրում էին Օսմանյան կայսրության կողմից այդ դրույթների կատարված չլինելը և նույն պահանջներն առաջադրում էին Թուրքիայի նոր իշխանություններին:

Պայմանագրի 37-րդ հոդվածով Թուրքիան ընդունում էր, որ 38-44-րդ հոդվածներով սահմանված իր պարտավորությունները ձանաչվում են իբրև հիմնական օրենքներ, և որևէ օրենք, կանոնակարգ կամ պաշտոնական գործողություն չի կարող հակասել կամ խոչընդոտել այդ պայմանավորվածությունների կատարումը կամ գերակա լինել դրանց նկատմամբ⁶¹: Այս հոդվածով Թուրքիան, փաստորեն, անբեկանելի պարտավորություններ էր ստանձնում միջազգային հանրության առաջ և ոչ մահմեդական հպատակների իրավունքների պաշտպանության հարցում երկրի ներպետական օրենսդրությունը պետք է համապատասխանեցներ Լոզանի պայմանագրի 38-44-րդ հոդվածներին:

Համաձայն փաստաթղթի 38-րդ հոդվածի՝ թուրքական կառավարությունը պարտավորվում էր երաշխավորել Թուրքիայի բոլոր բնակիչների կյանքի և գույքի լիարժեք պաշտպանությունը՝ առանց սեռի, ազգության, լեզվի, ցեղի կամ կրոնի խտրականության, իսկ 39-րդ հոդվածի առաջին և երկրորդ պարբերություններով 38-րդ հոդվածի պահանջը մասնավորեցվում էր՝ արձանագրելով ոչ մահմեդական փոքրամասնությունների քաղաքացիական և քաղաքական իրավունքների հավասարեցումը մահմեդականների իրավունքներին⁶²:

Պետք է նշել, սակայն, որ Լոզանի պայմանագրով նախկին օսմանահպատակների, այդ թվում՝ հայերի՝ իրենց գույքի նկատմամբ իրավունքի վերականգնման հարցում թուրքական կողմը ժամկետներ սահմանեց: Այդ իրավունքից օգտվելու համար սեփականատերերը պետք է մինչև 1924 թ. օգոստոսի 6-ը իրենց գույքի մոտ գտնվեին: Հե-

61 Տե՛ս նույն տեղում:

62 Տե՛ս **Թորիկեան Շ.**, նշվ. աշխ., էջ 186:

տագա գործողություններից պարզ դարձավ, թե ինչու էր թուրքական կողմն այդ դրույթը զետեղել պայմանագրում: Տարբեր շինծու պատճառաբանություններով թուրքական իշխանությունները սահմանափակեցին նախկին օսմանահպատակ ոչ մահմեդականների մուտքը երկիր՝ այդ կերպ զրկելով օրինական սեփականատերերին Լոզանի պայմանագրով սահմանված իրենց գույքային իրավունքների իրացման հնարավորությունից, ինչի հետևանքով նրանց մեծագույն մասն այդպես էլ չկարողացավ տեր կանգնել իր ունեցվածքին:

Պայմանագրի 40-րդ հոդվածի համաձայն՝ ոչ մահմեդական փոքրամասնությունները մահմեդականներին հավասար իրավունք էին ստանում իրենց միջոցներով բարեսիրական, կրոնական կամ հասարակական հաստատություններ հիմնելու և ղեկավարելու, ինչպես նաև իրենց կրոնն ու լեզուն ազատորեն գործածելու հարցում: 41-րդ հոդվածով նախատեսվում էր, որ այն քաղաքներում և գյուղերում, որտեղ ոչ մահմեդական քաղաքացիները զգալի թիվ էին կազմում, թուրքական կառավարությունը պետք է նպաստավոր պայմաններ ստեղծեր նախակրթական դպրոցներ բացելու համար, որպեսզի ոչ մահմեդական քաղաքացիները հնարավորություն ունենային իրենց զավակներին դաստիարակելու մայրենի լեզվով⁶³:

Կարևոր է նշել, որ Լոզանի պայմանագրի 42-րդ հոդվածով թուրքական իշխանությունները պարտավորվել են ապահովել ոչ մահմեդական փոքրամասնությունների եկեղեցիների, սինագոգների, գերեզմանատների և կրոնական այլ հաստատությունների պաշտպանությունը և պահպանությունը: Դա ենթադրում է, որ թուրքական պետությունը ոչ միայն չպետք է ավերի հայկական եկեղեցիները, այլև պարտավոր է իրականացնել տարբեր պատճառներով քանդված կամ կիսաքանդ հայկական կրոնական կառույցների վերականգնողական աշխատանքներ:

Փաստաթղթի 44-րդ հոդվածով ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող վերը նշված հոդվածները սահմանում են Թուրքիայի միջազգային պարտավորությունները դաշնակից տերությունների առջև, և դրանց կատարման հսկողությունը ոչ միայն որպես իրավունք, այլև որպես պարտականություն դրվում է Ազգերի լիգայի խորհրդի անդամների՝ Մեծ Բրիտանիայի,

63 Տե՛ս նույն տեղում:

Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի վրա: Նույն հոդվածի 4-րդ մասով նախատեսվում է ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքների հարցերով վեճերը դատական կարգով լուծելու հնարավորությունը: Լոզանի պայմանագրի մասնակից պետություններից մեկի պահանջով հարցը կարող է տեղափոխվել Արդարադատության միջազգային մշտական ատյան, որի վճիռը պետք է լինի վերջնական⁶⁴: Գործնականում Լոզանի պայմանագիրը ստորագրած պետություններից յուրաքանչյուրն այսօր էլ Թուրքիայի ոչ մահմեդական բնակչության իրավունքների ոտնահարման հարցերով կարող է դիմել ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան:

5. Թուրքիայի կողմից Լոզանի պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումները

Լոզանի պայմանագրի ստորագրումից հետո քեմալական վարչախումբն ընդունեց մի շարք սահմանափակող օրենքներ, որոնք ուղղակիորեն հակասում էին տվյալ պայմանագրով Թուրքիայի ստանձնած միջազգային պարտավորություններին: Պայմանագրի վավերացումից անմիջապես հետո՝ 1923 թ. սեպտեմբերին, քեմալական իշխանություններն ընդունեցին «Լքյալ գույքի մասին» հերթական օրենքը, որով հայերի ամբողջ ունեցվածքը բռնագրավվում էր՝ անկախ նրանից, թե ինչ պատճառներով ու ինչ հանգամանքների հարկադրմամբ էին նրանք թողել երկիրը: Նոր օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Կիլիկիայից և արևելյան նահանգներից գաղթած հայերը չպետք է ստանային երկիր մուտք գործելու արտոնագիր, մերժվում էր անգամ երաշխավորագրերի միջոցով նրանց սեփականության իրավունքների պաշտպանության հնարավորությունը, հայերին տրված բոլոր լիազորագրերը հայտարարվում էին անվավեր⁶⁵: Նույն օրենքի 3-րդ հոդվածով արգելվում էր երկիր նախկին օսմանահպատակ այն օտարերկրյա քաղաքացիների մուտքը, որոնք նոր կարգավիճակ էին ստացել առանց թուրքական իշխանությունների թույլտվության⁶⁶:

64 Տե՛ս Treaty of Lausanne:

65 Տե՛ս **Բարսեղով Յու.**, Հայերի ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հրատ., 1999, էջ 14:

66 Տե՛ս **Լեւոն Վարդան**, Հայկական տասնհինգը և հայերու լքեալ գոյքերը (Քննական ակնարկ մը ըստ թրքական վաւերագրերու), Պէյրուք, «Ատլաս» հրատ., 1970, էջ 258:

Տվյալ օրենքի «տրամաբանությամբ»՝ բոլոր նախկին օսմանահպատակները, մասնավորապես՝ հայերը, այլ երկրի քաղաքացիություն ստանալուց առաջ պետք է ստանային թուրքական պետության համաձայնությունը, այն նույն պետության, որն ամեն կերպ ջանացել էր ֆիզիկապես ոչնչացնել իրենց: Այս անհեթեթ «փաստարկով» էին թուրքական իշխանությունները փորձում «հիմնավորել» իրենց նախկին հպատակների գույքը զանգվածաբար բռնագավթելու քաղաքականությունը: Ակնհայտ է, սակայն, որ այլ երկրի քաղաքացիություն ձեռք բերելը բացարձակապես չի ենթադրում նախկին հպատակության երկրի թույլտվություն և չի կարող հանգեցնել վերջինիս տարածքում տվյալ անձի սեփականության իրավունքների չեղարկմանը:

1926 թ. Փարիզում լույս տեսած իր «Միջազգային հանրությունը և մեծ տերությունները Հայկական հարցի առջև» գրքում 1914 թ. հայկական բարենորոգումների ռուս-թուրքական պայմանագրի նախագծի հեղինակ, իրավաբան-միջազգայնագետ Ա. Մանդելշտամը միանգամայն իրավացիորեն նշում է, որ տերությունները պետք է դիմեին ճնշման որոշակի միջոցների թուրքական իշխանությունների նկատմամբ, որպեսզի պարտադրեին նրանց կատարել ոչ մահմեդականների և մասնավորապես հայերի իրավունքների պաշտպանությանն առնչվող պարտավորությունները: Ա. Մանդելշտամը իբրև նման ճնշման տարբերակներ առաջարկում էր Թուրքիային տնտեսական շրջափակման ենթարկելու սպառնալիքը կամ որպես պետություն այն չձանաչելու Ազգերի լիգայի որոշումը, որը, նրա կարծիքով, բավական էր քեմալականներին ծնկի բերելու համար⁶⁷: Մանդելշտամի այս դատողություններն արդիական են նաև մեր օրերում՝ արդեն կապված Թուրքիայի՝ Հայոց ցեղասպանության ժխտման քաղաքականության կանխման հետ:

1927 թ. մայիսի 23-ին ընդունվեց «Օսմանյան կայսրության հպատակների որոշակի դասակարգերի մասին» օրենքը, որի համաձայն՝ Թուրքիայի քաղաքացիությունից զրկվում էին Օսմանյան կայսրության այն հպատակները, որոնք անկախության պատերազմի ժամանակ չէին մասնակցել ազգային պայքարին, գտնվել էին Թուրքիայից դուրս և Լոզանի պայմանագրի ստորագրումից՝ 1923 թ. հուլիսի 24-ից

67 Տե՛ս Արման Պասալար, Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչությունը, Լոս Անձելըս, «Նաւասարդ» հրատ., 1989, էջ 58:

մինչև տվյալ օրենքի հրապարակումն ընկած ժամանակահատվածում չէին ներգաղթել թուրքական տարածք⁶⁸: Այսպիսով՝ Թուրքիայում մնացած ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության առումով Լոզանի պայմանագրով սահմանված պարտավորություններից խուսափելու և Ազգերի լիգայի հնարավոր միջամտությունը բացառելու նպատակով թուրքական իշխանությունները գնում էին ծայրահեղ քայլի՝ երկրից դուրս գտնվող նախկին օսմանահպատակ բոլոր հայերին գրկելով թուրքական քաղաքացիությունից և այդպիսով իրենց հայրենիք վերադառնալու իրավունքից:

Թուրքական իշխանությունների այս գործողությունների վերաբերյալ իրավական գնահատական ստանալու ակնկալիքով հայ գաղթականների կենտրոնական կոմիտեն 1929 թ. հունիսի 5-ին դիմեց հեղինակավոր չորս իրավաբան-միջազգայնագետների՝ Ժիլբեր Ժիդելին, Ալբեր Լապրադելին, Լուի Լեֆյուրին և Անդրե Մանդելշտամին՝ իրեն նախկին օսմանահպատակ հայ գաղթականների խախտված իրավունքների վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն տրամադրելու խնդրանքով:

1929 թ. օգոստոսի 2-ին հրապարակվեց խորհրդատվական եզրակացությունը, որում թուրքական իշխանությունների գործողությունները որակվում էին անօրինական, քանի որ դրանցով խախտվում էին ոչ միայն միջազգային իրավունքի գործող նորմերը, այլև Լոզանի պայմանագրի համապատասխան հոդվածներով Թուրքիայի ստանձնած պարտավորությունները: Փորձագետներն ընդգծում էին, որ նախկին օսմանահպատակ հայերի նկատմամբ գործադրվող սահմանափակումները որևէ իրավունք չեն տալիս թուրքական կառավարությանը բռնազավթելու նրանց ունեցվածքը, որը ենթակա է վերադարձի իր օրինական տերերին: Որպես ասվածի հիմնավորում մասնագետները մեջբերում էին հետպատերազմյան խաղաղության պայմանագրերից հոդվածներ, որոնցով ընդգծվում էր մասնավոր սեփականության պաշտպանության և վնասված կամ բռնագրավված ունեցվածքի վերականգնման պարտադիր սկզբունքը⁶⁹: Այսպիսով՝ **նախկին օսմանահպատակ հայերի՝ նոր պետության հպատակություն ձեռք բերելը, թուրքական իշխանությունների՝ նրանց հպատա-**

68 Տե՛ս **Բարսեղով Յու.**, նշվ. աշխ., էջ 15:

69 Տե՛ս նույն տեղում, էջ 27:

կույթունից և հայրենիք վերադառնալու իրավունքից զրկելը չեն կարող օրինական հիմք հանդիսանալ նրանց իրենց ունեցվածքից և իրավունքներից զրկելու համար:

Թուրքիան տասնամյակներ շարունակ խախտել է Լոզանի պայմանագրի՝ ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը վերաբերող հոդվածները, ինչի դրսևորում պետք է համարել 1929–1930 թթ. կոտորածները վերապրած 30–40.000 հայերի հարկադիր արտաքսումը դեպի Սիրիա և Թուրքիայի հայկական համայնքի կալվածքների ապօրինի բռնագրավումը⁷⁰: Այս հարցում իրենց մեղավորությունն ունեն Լոզանի պայմանագիրը ստորագրած մյուս պետությունները, որոնք փաստորեն թույլ տվեցին Թուրքիային խախտել իր ստանձնած պարտավորությունները:

Եզրակացություններ

Լոզանի պայմանագրի ստորագրման գործընթացում չեն պահպանվել միջազգային պայմանագրերի փոփոխման համար նախատեսված պարտադիր պայմաններն ու ընթացակարգերը: Քանի որ երկու պայմանագրերի ինչպես առարկաները, այնպես էլ դրանք ստորագրող կողմերը նույնական չեն, ուրեմն հիմքեր չկան պնդելու, որ Սևրի պայմանագիրն իրավական առումով փոփոխվել կամ փոխարինվել է Լոզանի պայմանագրով: Սևրի պայմանագրի կողմ հանդիսացող և Լոզանի պայմանագիրը չստորագրած պետությունների, այդ թվում՝ Հայաստանի համար վերջինս որևէ փոփոխության չէր կարող ենթարկել Սևրի պայմանագրում ամրագրված Հայաստանի իրավունքները:

Լոզանի պայմանագրով ոչ մահմեդական բնակչության ու մասնավորապես հայերի իրավունքների պաշտպանության առումով Թուրքիայի ստանձնած լրացուցիչ պարտավորություններն իրենց ուժը չեն կորցրել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թուրքական իշխանությունները հետևողականորեն խախտում են Լոզանի պայմանագրով իրենց ստանձնած պարտավորությունները, Հայաստանի Հանրապետությունը կարող է կոչ անել Լոզանի պայմանագիրը ստորագրած երկրներին Թուրքիայից պահանջելու կատարել ոչ մահմեդա-

70 Տե՛ս Թորիկեան Շ., նշվ. աշխ., էջ 138:

կանների իրավունքների պաշտպանությանը վերաբերող 38-44-րդ հոդվածներով ստանձնած պարտավորությունները, որոնք նա տասնամյակների ընթացքում պարբերաբար խախտել է: Հիմք ընդունելով «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969 թ. կոնվենցիայի 26-րդ հոդվածում ամրագրված հանրահայտ «Pacta sunt servanda» սկզբունքի կոպիտ խախտումները Թուրքիայի կողմից, որը պարտադիր է համարում պայմանագիրը ստորագրած յուրաքանչյուր մասնակցի կողմից իր ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարումը⁷¹, այդ երկրները կարող են առաջնորդվել հիշյալ կոնվենցիայի 60-րդ հոդվածով, որը նման դեպքերում հնարավորություն է տալիս իրավախախտ պետության համար մասամբ կամ ամբողջությամբ դադարեցնելու պայմանագրի գործողությունը՝ դրանից բխող հետևանքներով: Դրանից բացի՝ այդ պետությունները կարող են առաջնորդվել հենց Լոզանի պայմանագրի 44-րդ հոդվածի 4-րդ մասով և, ոչ մահմեդականների իրավունքների խախտումը համարելով վեճ Թուրքիայի հետ, դիմել լուծարված Արդարադատության միջազգային մշտական պալատի ժառանգորդ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան: Նման գործընթաց սկսելու համար, ըստ նույն հոդվածի դրույթների, բավարար է անգամ պայմանագրի անդամ պետություններից մեկի պահանջը, իսկ Թուրքիան, ստորագրելով ու վավերացնելով Լոզանի պայմանագիրը, ընդունել է, որ միջազգային դատական ատյանի որոշումն իր համար լինելու է վերջնական:

Արմեն Յ. Մարտիյան – 60-ից ավելի գիտական հոդվածների, հայերեն, ռուսերեն և անգլերեն 10 գրքերի հեղինակ և փաստաթղթերի 4 ժողովածուների կազմող է: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության հարցերը և Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները:

Էլ. հասցե՝ mararmts@yahoo.com

71 Տե՛ս «Международное право в документах», էջ 78:

Summary

THE ARMENIAN QUESTION AT THE LAUSANNE CONFERENCE

To the 100th anniversary of the signing of the Treaty of Lausanne on July 24, 1923

Armen Ts. Marukyan

Doctor of Sciences in History

Key words - Armenian Question, Lausanne Conference, Armenian "national home", rights of non-Muslim minorities, Treaty of Sevres, Treaty of Lausanne, Armenia, Turkey.

In the process of signing the Lausanne Treaty, the mandatory conditions and procedures for amending international treaties were not observed. Since neither the subjects nor the parties of the two treaties are identical, there is no reason to argue that the Treaty of Sèvres has been legally superseded by the Treaty of Lausanne. Based on this, it can be stated that the rights of the state parties to the Treaty of Sevres that are not parties to the Treaty of Lausanne, from a legal point of view, could not undergo any changes, in particular, the Treaty of Lausanne did not introduce any changes into the provisions of the Treaty of Sèvres regarding the rights and interests of Armenia.

The additional obligations of Turkey to protect the rights of the non-Muslim population, and especially the Armenians, fixed by the Lausanne Treaty, have not lost their force. Considering the fact that the Turkish authorities systematically violate the obligations assumed by the Treaty of Lausanne, the Republic of Armenia may call on the countries that have signed the Treaty of Lausanne to demand from Turkey the fulfillment of the obligations assumed by Articles 38-44 regarding the protection of the rights of non-Muslims, which they violated on for decades. Taking into account the gross violations by Turkey of the well-known principle "Pacta sunt servanda", enshrined in Article 26 of the Vienna Convention of 1969 "On the Law of Treaties", which implies the conscientious fulfillment of the obligations assumed by each participant who signed the agreement, the states parties to the Lausanne Treaty can be guided by the 60th article of the said convention, which in such cases allows partial or complete termination of this contract with corresponding consequences for the Turkish state.

In addition, these countries participating in the Lausanne Treaty can be guided by paragraph 4 of the 44th article of this treaty and, qualifying the violation of the rights of non-Muslims by Turkey as a dispute between them and this state, apply to

the International Court of Justice, which is the legal successor of the dissolved International Permanent Court of Justice.

Резюме

АРМЯНСКИЙ ВОПРОС НА ЛОЗАННСКОЙ КОНФЕРЕНЦИИ

К 100-летию подписания Лозаннского договора 24 июля 1923 г.

Армен Ц. Марукян

Доктор исторических наук

Ключевые слова – Армянский вопрос, Лозаннская конференция, армянский «национальный очаг», права немусульманских меньшинств, Севрский договор, Лозаннский договор, Армения, Турция.

В процессе подписания Лозаннского договора не были соблюдены условия и процедуры, обязательные при внесении изменений в международные договоры. Поскольку как предметы, так и стороны при заключении двух договоров не идентичны, нет оснований утверждать, что Севрский договор с юридической точки зрения заменен Лозаннским договором. Исходя из этого, можно констатировать, что права государств-участников Севрского договора, не являющихся юридическими сторонами Лозаннского договора, с юридической точки зрения не могли претерпеть какие-либо изменения, в частности, Лозаннский договор не внес каких-либо изменений, касающихся прав и интересов Армении, в положения Севрского договора.

Зафиксированные Лозаннским договором дополнительные обязательства Турции по защите прав немусульманского населения, и особенно армян, не утратили своей силы. Учитывая тот факт, что турецкие власти систематически нарушают обязательства, взятые на себя Лозаннским договором, Республика Армения может призвать страны, подписавшие Лозаннский договор, потребовать от Турции выполнения взятых на себя обязательств, согласно статьям 38-44 в отношении защиты прав немусульман, которые нарушались ей на протяжении десятилетий. Учитывая грубые нарушения Турцией известного принципа «Pacta sunt

servanda», закрепленного в статье 26 Венской конвенции 1969 года «О праве международных договоров», который предполагает добросовестное выполнение обязательств, взятых на себя каждым участником, подписавшим соглашение, государства-стороны Лозаннского договора могут руководствоваться 60-ой статьей упомянутой Конвенции, которая в таких случаях допускает частичное или полное расторжение данного договора с соответствующими последствиями для турецкого государства.

Кроме того, эти страны-участницы Лозаннского договора могут руководствоваться 4-ым пунктом статьи 44 данного договора и нарушение Турцией прав немусульман могут квалифицировать как спор между участниками договора и данным государством, и они могут обратиться в Международный Суд ООН, который является правопреемником распущенной Международной постоянной палаты правосудия.

REFERENCES

1. “Armjanskij vopros na Lozanskoj konferencii. Izvlechenija iz protokolov”, Tiflis, “Zakkniga”, 1926 **(In Russian)**.
2. “Genocid armjan: otvetstvennost’ Turcii i objazatel’stva mirovogo soobsh’estva. dokumenti i kommentarij”, Sostavitel’, otv. redactor, avtor predislovija i kommentarija d.i.n., professor, **Ju. G. Barsegov**, t. 1, M., izd. “Gardariki”, 2002, t. 2, ch. 1, M., 2003, t. 2, ch. 2, M., 2005 **(In Russian)**.
3. “Hayastanë mijazgayin divanagitut’yan yev sovetakan artak’in k’aghak’akanut’yan p’astat’gh’erum (1828-1917)”, khmb. **J. Kirakosyan**, Yer., “Hayastan” hrat., 1972 **(In Armenian)**.
4. “Mezhdunarodnoje pravo v dokumentax”, sost. sbornika **N. T. Blatova**, M., “Jurid. lit.”, 1982 **(In Russian)**.
5. **Ak’ts’oghlu Y.**, Anitsvats arjutsi bnajnjumë: Mer Anatoliayi hellenakanut’yan met’odakan bnajnjman gortsëntats’i irar hajordogh p’ulerë, Yer., “Chartaraget” hrat., 2007 **(In Armenian)**.
6. **Arman Gaspar**, Hay azatagrakan payk’arn u ahabekch’ut’iwnë, Los Anchelës, “Nawasard” hrat., 1989 **(In Armenian)**.
7. **Arzumanyan M.**, Nansenë yev Hayastanë, Yer., “Hayastan” hrat., 1986 **(In Armenian)**.
8. **Barseghov Yu.**, Hayeri ts’eghaspanut’yan hamar nyut’akan pataskhanatvut’yunë, Yer., Hayots’ ts’eghaspanut’yan t’angaran-instituti hrat., 1999 **(In Armenian)**.
9. **Barsegov Ju.**, Arbitrazhnoje reshenije prezidenta SSHA po armjano-tureckoj granice (politicheskij i mezhdunarodno-pravovoj kommentarij), Yer., Centr rusско-armjanskix iniciativ, 1995 **(In Russian)**.
10. **Barsegov Ju.**, Genocid armjan – prestuplenije po mezhdunarodnomu pravu, M., “XXI vek – Soglasije”, 2000 **(In Russian)**.
11. **Barsegov Ju.**, Tureckaja doktrina mezhdunarodnogo prava na sluzhbe politiki genocida (o koncepcii chlena “komissii primirenija” Gjunduz Aktana), M., “Gotika”, 2002 **(In Russian)**.

12. **Goroxov I., Zamjatin L., Zemskov I.,** G. V. Chicherin – diplomat leninskoj shkoli, M., izd. Politicheskoy literatury, 1973 (**In Russian**).
13. **Khatisean A.,** Hayastani Hanrapetut'ean tsagumn u zargats'umě, B t'pagr., Pēyruť, Hamazgayin, 1968 (**In Armenian**).
14. **Kokinov P.,** Hunahay gaghut'i patmut'yunits' (1917-1927), Yer., HSSR hrat., 1965 (**In Armenian**).
15. **Lewon Vardan,** Haykakan tashningě yev hayeru lk'eal goyk'erě, Pēyruť, "Atlas" hrat., 1970 (**In Armenian**).
16. **Maruk'yan A.,** Hayots' ts'eghaspanut'yan gortsov mijazgayin dataran dimelu himk'ern u hnaravorut'yunnerě, Yer., "Tir" hrat., 2014 (**In Armenian**).
17. **Maruk'yan A.,** Hayots' ts'eghaspanut'yan hetevank'neri haghť'aharman himnakhndirnern u patmairavakan himnavorumnerě, Yer., HH GAA patmut'yan instituti hrat., 2014 (**In Armenian**).
18. **Maxmurjan G.,** Armenija v politike SSHA 1917-1923 gg., Yer., 2018 (**In Russian**).
19. **Papyan A.,** Hayots' pahanjatirut'yan iravakan himkerě (hodvatsneri zhoghovatsu), Yer., "Asoghik" hrat., 2007 (**In Armenian**).
20. **Tērtērean G.,** Mer hoghayin pahanjatirut'iwně mijazgayin hanrayin iravunk'in mēj (Taragir Arewmtahayut'ean Hamasp'iwřk'ean K'onkrēsın TAHK'-i Hramayakaně), B. t'pagrut'iwn, Pēyruť, "Zinkograf Kesdenean", 2016 (**In Armenian**).
21. **T'orikean Sh.,** Haykakan harts'ě yew mijazgayin ōrēnk'ě, Pēyruť, Hamazgayini Vahē Sēt'ean t'paran, 1976 (**In Armenian**).
22. **Vardanyan G.,** Huyn bnakch'ut'yunn Ōsmanyān kaysrut'yunum yev p'ok'rasiaakan aghetě (1914-1923 t't'), Yer., Hayots' ts'eghaspanut'yan t'angaran-instituti hrat., 2012 (**In Armenian**).